ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-20-8/4-4

ք. Երևան 21.05.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ -ը, ի դեմս տնօրեն Ի. Անդրեասյան-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 31776720 (երեսունմեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 56-րդ, 58-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակները հանդիսանում են հիմնական միջոց: 56-րդ չափաբաժնի համար մատակարաը պարտավորվում է ապահովել երաշխիքային տեխնիկական սպասարկում արտադրողի կողմից արտոնագրված տեխնիկական սպասարկման կենտրոնում՝ առնվազն 240000 պատճեն կամ 365 օրացուցային օր, 56-րդ, 58-րդ չափաբաժինների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված *հինգ* աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի

միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 ;[24]

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ աշխատակազմը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 ՀՀ ՊՆ ՆՏԱ գնումների կազմակերպման պետ	«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ ք. Երևան, Վարդանանց 18/2 “Ինեկոբանկ” ՓԲԸ Հ/Հ 2050022151631001 ՀՎՀՀ 02508699 տնօրեն
ՅՈԼՉՅԱՆ	Ի. Անդրեասյան

[24] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փոփոխության ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է ապամանագրից, եթե ապամանագիրը չի նկատվում "Գնումների*

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-8/4-4 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի		
չ/հ	անվանումը	տեխնիկական բնութագիրը
2.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ / Թմբուկ-քարթրիջ Xerox WC 5019/5021 /	Նախատեսված է Xerox 5019 պատճենահանման մեքենայի համար,մատակարարման ժամանակ կներկայացվի Certificate of Origin (ծագման հավաստագիր) և MAF (Manufactoring Autorisation Form)
3.	Տոներային քարտրիջներ / Տոներ Xerox WC -5016/5020 /	Նախատեսված է Xerox WC 5016/5020 պատճենահանման մեքենայի համար, մատակարարման ժամանակ կտրամադրվի Certificate of Origin (ծագման հավաստագիր) և MAF (Manufactoring Autorisation Form)
5.	Տոներային քարտրիջներ / Տոներ Xerox B1022DN /	Տոներ-քարթրիջ/Toner Cartridge, նախատեսված է Xerox B1022 մեքենայի համար, 006R01731, առնվազն 13700 A4 էջ մեկկողմանի տպագրության ռեսուրսով 5% ծածկույթի դեպքում (ISO/IEC 19752), ներկափոշին սև գույնի, քաշը՝ առնվազն 1.142 kg, լիովին համապատասխանում է Xerox B1022 մեքենայի անխափան աշխատանքի համար պահանջվող ցուցանիշներին: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտա- գործված վիճակում: մատակարարման ժամանակ կներկայացվի Certificate of Origin (ծագման հավաստագիր) և MAF (Manufactoring Autorisation Form)
6.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ / Թմբուկ- քարթրիջ Xerox B1022DN /	Թմբուկ քարթրիջ/ Drum Cartridge, նախատեսված է Xerox B1022 մեքենայի համար, առնվազն 80000 էջ A4 էջ մեկկողմանի տպագրության ռեսուրսով առնվազն 5% ծածկույթի դեպքում, 013R00679, լիովին տեխնիկապես համապատասխանում է Xerox B1022 մեքենայի անխափան աշխատանքի համար պահանջվող ցուցանիշներին: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: մատակարարման ժամանակ կներկայացվի Certificate of Origin (ծագման հավաստագիր) և MAF (Manufactoring Autorisation Form)
7.	Տոներային քարտրիջներ / Տոներ WC 5890/	Տոներ, ներկափոշի, սև գույնի, նախատեսված է Xerox WC 5890 պատճենահանման մեքենայի համար: 80գր Ա4 թղթի էջի 5% ծածկույթի դեպքում՝ առնվազն 20000 էջ տպագրման ռեսուրսով Ստվարաթղթե տուփում փաթեթավորված յուրաքանչյուր երկու տոների հետ՝ մեկ օգտագործած ներկափոշու տարա: Part 006R01552
12.	Տոներային քարտրիջներ /Տոներ Xerox Versant 80 սև (K)/	Տոներ-քարթրիջ սև գույնի, 6R1642 տեսակի, նախատեսված Xerox Versant Press 80/2100 մեքենայի համար, 80գր Ա4 թղթի էջի 7,5% ծածկույթի դեպքում՝ առնվազն 20000 էջ տպագրման ռեսուրսով, գործարանային արտադրության, փակ տուփով, արտադրողի հոլոգրաֆիկ պաշտպանիչ նշանի առկայությամբ, մատակարարման պահին պիտանելիության ժամկետը առնվազն 2 տարի:
13.	Տոներային քարտրիջներ /Տոներ Xerox Versant 80 կապույտ (C)/	Տոներ-քարթրիջ կապույտ գույնի, 6R1643 տեսակի, նախատեսված Xerox Versan Press 80/2100 մեքենայի համար, էջի 7,5% ծածկույթի դեպքում՝ առնվազն 22000 էջ տպագրման ռեսուրսով, գործարանային արտադրության, գործարանային փակ տուփով, արտադրողի հոլոգրաֆիկ պաշտպանիչ նշանի առկայությամբ, մատակարարման պահին պիտանելիության ժամկետը առնվազն 2 տարի:
14.	Տոներային քարտրիջներ /Տոներ	Տոներ-քարթրիջ կարմիր գույնի, 6R1644 տեսակի, նախատեսված Xerox Versant Press 80/2100 մեքենայի համար, էջի 7,5% ծածկույթի դեպքում՝ առնվազն 21000

	Xerox Versant 80 կարմիր (M) /	էջ տպագրման ռեսուրսով, գործարանային արտադրության, գործարանային փակ տուփով, արտադրողի հոլոգրաֆիկ պաշտպանիչ նշանի առկայությամբ, մատակարարման պահին պիտանելիության ժամկետը առնվազն 2 տարի:
15.	Տոներային քարտրիջներ /Տոներ Xerox Versant 80 դեղին (Y) /	Տոներ-քարթրիջ դեղին գույնի, 6R1645 տեսակի, նախատեսված Xerox Versant Press 80/2100 մեքենայի համար, էջի 7,5% ծածկույթի դեպքում՝ առնվազն 22000 էջ տպագրման ռեսուրսով, գործարանային արտադրության, գործարանային փակ տուփով, արտադրողի հոլոգրաֆիկ պաշտպանիչ նշանի առկայությամբ, մատակարարման պահին պիտանելիության ժամկետը առնվազն 2 տարի:
16.	Տոներային քարտրիջներ /Տոներ քարթրիջ սև 26K Altalink C 8030/	Տոներ-քարթրիջ, նախատեսված է Xerox Altalink C8030/8035/8045/8055/8070 մեքենայի համար, 006R01701 , առնվազն 26000 A4 էջ մեկկողմանի տպագրության ռեսուրսով 5% ծածկույթի դեպքում (ISO/IEC 19752), ներկափոշին սև գույնի, տուփի վրա տպագրված քաշը՝ 622 գրամ կամ ավել, արտադրողի հոլոգրաֆիկ պաշտպան, լիովին տեխնիկապես համապատասխանում է Xerox Altalink C8030/8035/8045/8055/8070 մեքենայի անխափան աշխատանքի համար պահանջվող ցուցանիշներին:
17.	Տոներային քարտրիջներ /Տոներ քարթրիջ կապույտ 15K Altalink C 8030 /	Տոներ-քարթրիջ, նախատեսված է Xerox Altalink C8030/8035/8045/8055/8070 մեքենայի համար, 006R01702 , էջի 5% ծածկույթի դեպքում՝ (ISO/IEC 19752) առնվազն 15000 A4 ձևաչափի էջ տպագրման ռեսուրսով, ներկափոշին կապույտ գույնի, տուփի վրա տպագրված քաշը՝ 352 գրամ կամ ավել, արտադրողի հոլոգրաֆիկ պաշտպան, լիովին տեխնիկապես համապատասխանում է Xerox Altalink C8030/8035/8045/8055/8070 մեքենայի անխափան աշխատանքի համար պահանջվող ցուցանիշներին:
18.	Տոներային քարտրիջներ /Տոներ քարթրիջ կարմիր 15K Altalink C 8030 /	Տոներ-քարթրիջ, նախատեսված է Xerox Altalink C8030/8035/8045/8055/8070 մեքենայի համար, 006R01703 , էջի 5% ծածկույթի դեպքում՝ (ISO/IEC 19752) առնվազն 15000 A4 ձևաչափի էջ տպագրման ռեսուրսով, ներկափոշին կարմիր գույնի, տուփի վրա տպագրված քաշը՝ 351 գրամ կամ ավել, արտադրողի հոլոգրաֆիկ պաշտպան, լիովին տեխնիկապես համապատասխանում է Xerox Altalink C8030/8035/8045/8055/8070 մեքենայի անխափան աշխատանքի համար պահանջվող ցուցանիշներին:
26.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/WC 5890 վառարանի հանգույց/	Վառարանի հանգույց Fuser Mod ESG 50Hz incl. ozone filter համապատասխան որակավորում ունեցող ինժեների կողմից տեղադրումով, նախատեսված է Xerox WC5890 մեքենայի համար, առնվազն 400000 էջ A4 էջ մեկկողմանի տպագրության ռեսուրսով 6% ծածկույթի դեպքում, 109R00772: Հանգույցը ներառում է օզոնային ֆիլտր և նախատեսված է 220Վ սարքերի համար, լիովին տեխնիկապես համապատասխանում է Xerox 5890 մեքենայի անխափան աշխատանքի համար պահանջվող ցուցանիշներին: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում:
27.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/WC 5890 թմբուկի հանգույց /	Թմբուկ Xerographic Module, նախատեսված է Xerox WC5890 մեքենայի համար, առնվազն 450000 էջ A4 էջ մեկկողմանի տպագրության ռեսուրսով 6% ծածկույթի դեպքում, 113R00673, տեխնիկապես լիովին համապատասխանում է Xerox 5890 մեքենայի անխափան աշխատանքի համար պահանջվող ցուցանիշներին:
28.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/Թմբուկ - քարթրիջ սև (DC 252)/	Թմբուկ- քարթրիջ սև, նախատեսված է Xerox DC 252 գունավոր պատճենահանման մեքենայի համար: 80գր Ա4 թղթի էջի 5% ծածկույթի դեպքում՝ առնվազն 240000 էջ տպագրման ռեսուրսով: Part 013R00602
29.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/Թմբուկ - քարթրիջ գունավոր	Թմբուկ- քարթրիջ գունավոր, նախատեսված է Xerox DC 252 գունավոր պատճենահանման մեքենայի համար: 80գր Ա4 թղթի էջի 5% ծածկույթի դեպքում՝ առնվազն 100000 էջ տպագրման ռեսուրսով Part 013R00603

	(DC 252)/	
30.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/DC 252 մեքենայի դեվելոպերի հանգույց/	Դեվելոպերի հանգույց, նախատեսված է Xerox DC 252 գունավոր պատճենահանման մեքենայի համար:
31.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/DC 252 մեքենայի քաշող գլանակներ/	Ռետինե գլանակներ, նախատեսված Xerox DC252 գունավոր պատճենահանման մեքենայի թղթադարանից առաջնահերթ թուղթը մատակարարելու համար:
32.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/Ֆոտո թմբուկ 125K Altalink C 8030 /	Ֆոտո թմբուկ, նախատեսված է Xerox Altalink C8030 մեքենայի համար, առնվազն 125000 էջ տպագրման ռեսուրսով, 013R00662 , լիովին տեխնիկապես համապատասխանում է Xerox Altalink C8030/8035/8045/8055/8070 մեքենայի անխափան աշխատանքի համար պահանջվող ցուցանիշներին:
33.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/Թմբուկ Drum module Xerox Versant 80/	Թմբուկ-քարթրիջ 013R00674, 13R674 տեսակի, նախատեսված Xerox Versant Press 80/2100 մեքենայի համար, առնվազն 348000 էջ տպագրման ռեսուրսով, գործարանային արտադրության, գործարանային փակ տուփով, արտադրողի հոլոգրաֆիկ պաշտպանիչ նշանի առկայությամբ:
43.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ/Մարզան/	Նախատեսված է IDEAL 6550-95 EP թուղթ կտրող մեքենայի վրա տեղադրելու համար: Համապատասխանում է կտրող մեքենայի տեխնիկական պահանջներին:
46.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ / Դանակ IDEAL 6550-95 EP թուղթ կտրող մեքենայի համար /	Նախատեսված է IDEAL 6550 կտրիչի համար, համապատասխան dto. HSS-Ausfuhrung: Համապատասխանում է կտրող մեքենայի տեխնիկական պահանջներին:
53.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ / DC 252 մեքենայի պահեստամաս IBT BELT KIT /	DC 252 մեքենայի պահեստամաս IBT BELT KIT՝ նախատեսված Xerox DC 252 գունավոր պատճենահանման մեքենայի համար: Գործարանային փաթեթավորմամբ:
54.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ / DC 252 մեքենայի պահեստամաս IBT CLEANER /	DC 252 մեքենայի պահեստամաս IBT CLEANER՝ նախատեսված Xerox DC 252 գունավոր պատճենահանման մեքենայի համար: Գործարանային փաթեթավորմամբ:
55.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ / DC 252 մեքենայի պահեստամաս IST BTR ROLL /	DC 252 մեքենայի պահեստամաս IIST BTR ROLL՝ նախատեսված Xerox DC 252 գունավոր պատճենահանման մեքենայի համար: Գործարանային փաթեթավորմամբ:
56.	Գրասենյակային և տեղեկատվական մեքենաներ /	Բազմաֆունկցիոնալ պատճենահանող, տպիչ սարք Xerox B1022DN կամ համարժեք

	Պատճենման մեքենա /	լազերային A-3 ձևաչափի, միագույն, իրականացնում է տպագրություն, սկանավորում ցանցով և e-mail, պատճենահանում, հիշողությունը առնվազն 256 մբ , պրոցեսորի հզորությունը առնվազն 600 Մhg, երկկողմանի տպագրություն բազային լրակազմում: Միացման եղանակները՝ Ethernet 10/100 Base-T, High-speed USB 2.0: Օգտագործվող թղթի խտությունը 60-163 գր/մ2, ստանդարտ մատուցող դարակների ծավալը առնվազն 350 թերթ (լրացուցիչ մինչև 600թերթ լրակազմելու հնարավորությամբ), ստանդարտ ելքի դարակի ծավալը առնվազն 250 թերթ: Տպագրության լուծաչափը առնվազն 1200dpi, պատճենահանման լուծաչափը 600 x 600 dpi: Առաջին էջի ելքը պատճենահանման ժամանակը՝ ոչ ավելին քան 7.8 վրկ, մեկամսյա աշխատանքների առավելագույն ծավալը առնվազն 50000 թերթ, տպագրության/պատճենահանման արագությունը առնվազն 22 էջ/րոպե A4 ձևաչափի և առնվազն 11 էջ/րոպե A3 ձևաչափի համար: Սարքավորման վրա առկա է 4-տողանի հեղուկ բյուրեղային էկրան, դիմային USB միացման բնիկ՝ տպագրության կամ USB կրիչի վրա սկանավորում իրականացնելու համար:Տպիչի կառավարման լեզուներն են՝ PCL 6, Adobe PostScript: Անվտանգության ստանդարտ հնարավորություններն են՝ աուդիտի մատյանի առկայություն, կոդավորում: Օգտագործվող ներկափոշին մեկ կոմպոնենտային (առանց առանձին դեվելոպերի), պարունակում է Drum Unit առնվազն 80000 էջի (օգտագործողի ուժերով արագ փոխարինվող թմբուկի հանգույց): Սարքի հետ, բացի 2500 էջ ռեսուրսով բազային տոներային քարտրիջից, լրացուցիչ տոներային քարթրիջ՝ նախատեսված առնվազն 13700 էջի համար: Հոսանքի սնուցումը՝ AC 220-250 V, 50-60 Hz: Մատակարարը պարտավորվում է ապահովել երաշխիքային տեխնիկական սպասարկում արտադրողի կողմից արտոնագրված տեխնիկական ապասարկման կենտրոնում՝ առնվազն 240000 պատճեն կամ 365 օր: Ներկայացվում է առաջարկվող ապրանքի արտադրողի անունից նամակ-լիազորագիր (MAF - Manufacturer's Authorization Form):
58.	Գրասենյակային և բիզնես մեքենաներ /Թուղթ ոչնչացնող սարք	Թուղթ ոչնչացնող սարք, IDEAL 2445 C/C կամ համարժեք: Թղթաբեկորի չափսերը՝ 2x15 մմ, մինչև 8-10 հատ միաժամանակ ոչնչացման ենթակա A-4 ձևաչափի 80գր թղթերի համար, անվտանգության մակարդակը 5-րդ, ընդունող պատուհանի լայնությունը 24 սմ, կտրման արագությունը՝ 0,1 մ/վ, կուտակիչի ծավալը 35 լիտր: Չափսերը՝ 635x395x291 մմ: Մեկ տարվա երաշխիքային ժամկետ: Հոսանքի սնուցումը՝ AC 220-250 V, 50-60 Hz: Ցուցանիշների թույլատրելի շեղումը՝ 0.1%:

Ծանոթություն՝ - մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, արտադրողի և մակնիշի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը պարտադիր չէ:

-Պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացումը պարտադիր չէ:

- Ցանկում ներառված բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
- 56-րդ, 58-րդ չափաբաժինները հանդիսանում են որպես հիմնական միջոց:
- Բոլոր ապրանքները պետք է լինեն չօգտագործված:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏՄ նախագծի վարչության պետ

ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ
տնօրեն

Ի. Անդրեասյան

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (<< դրամ)	ընդհանուր գումարը (<< դրամ)	մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝
						2-րդ եռամսյակ
2.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ / Թմբուկ-քարթրիջ Xerox WC 5019/5021 /	հատ	78	114960	8966880	78
3.	Տոներային քարտրիջներ / Տոներ Xerox WC - 5016/5020 /	հատ	15	15000	225000	15
5.	Տոներային քարտրիջներ / Տոներ Xerox B1022DN /	հատ	24	44400	1065600	24
6.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ / Թմբուկ- քարթրիջ Xerox B1022DN /	հատ	12	178800	2145600	12
7.	Տոներային քարտրիջներ / Տոներ WC 5890/	հատ	10	34800	348000	10
12.	Տոներային քարտրիջներ /Տոներ Xerox Versant 80 սև (K)/	հատ	17	41400	703800	17
13.	Տոներային քարտրիջներ /Տոներ Xerox Versant 80 կապույտ (C)/	հատ	14	48000	672000	14
14.	Տոներային քարտրիջներ /Տոներ Xerox Versant 80 կարմիր (M) /	հատ	14	48000	672000	14
15.	Տոներային քարտրիջներ /Տոներ Xerox Versant 80 դեղին (Y) /	հատ	18	48000	864000	18
16.	Տոներային քարտրիջներ /Տոներ քարթրիջ սև 26K Altalink C 8030/	հատ	3	76320	228960	3
17.	Տոներային քարտրիջներ /Տոներ քարթրիջ կապույտ 15K Altalink C 8030 /	հատ	2	87600	175200	2
18.	Տոներային քարտրիջներ /Տոներ քարթրիջ կարմիր 15K Altalink C 8030 /	հատ	2	87600	175200	2
26.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/WC 5890 վառարանի հանգույց/	հատ	3	230000	690000	3
27.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/WC 5890 թմբուկի հանգույց /	հատ	3	224000	672000	3
28.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/Թմբուկ - քարթրիջ սև (DC 252)/	հատ	3	227000	681000	3
29.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/Թմբուկ - քարթրիջ գունավոր (DC 252)/	հատ	4	199200	796800	4
30.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/DC 252 մեքենայի դեվելոպերի հանգույց/	հատ	1	226080	226080	1
31.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/DC 252 մեքենայի քաշող գլանակներ/	հատ	6	22000	132000	6
32.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/Ֆոտո թմբուկ 125K Altalink C 8030 /	հատ	1	225000	225000	1
33.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/Թմբուկ Drum module Xerox Versant 80/	հատ	6	87600	525600	6
43.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ/Մարզան/	հատ	6	7800	46800	6
46.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ / Դանակ IDEAL 6550-95 EP թուղթ կտրող մեքենայի համար /	հատ	2	306000	612000	2
53.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ / DC 252 մեքենայի փոխանցման IBT BELT KIT /	հատ	1	86400	86400	1

54.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ / DC 252 մեքենայի պահեստամաս IBT CLEANER /	հատ	1	110400	110400	1
55.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ / DC 252 մեքենայի պահեստամաս IST BTR ROLL /	հատ	4	27600	110400	4
56.	Գրասենյակային և բիզնես մեքենաներ / Պատճենման մեքենա /	հատ	10	356400	3564000	10
58.	Գրասենյակային և բիզնես մեքենաներ /Թուղթ ոչնչացնող սարք	հատ	20	352800	7056000	20

Ծանոթություն՝ -նշված Ապրանքները մատակարարվելու են ք. Երևան, Բագրևանդի 5, ՀՀ ՊՆ տարածք, մատակարար կազմակերպության տրանսպորտով:
-յուրաքանչյուր անվանատող դիտարկել որպես առանձին չափաբաժին:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

ՀՈՎՀԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ
տնօրեն

Ի. Անդրեասյան

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-8/4-4 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի											
չ/հ	անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
2.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ / Թմբուկ-քարթրիջ Xerox WC 5019/5021 /	30121450/1	8966880	8966880	8966880	8966880	8966880	8966880	8966880	8966880	8966880
3.	Տոներային քարտրիջներ / Տոներ Xerox WC - 5016/5020 /	30121460/28	225000	225000	225000	225000	225000	225000	225000	225000	225000
5.	Տոներային քարտրիջներ / Տոներ Xerox B1022DN /	30121460/29	1065600	1065600	1065600	1065600	1065600	1065600	1065600	1065600	1065600
6.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ / Թմբուկ- քարթրիջ Xerox B1022DN /	30121450/3	2145600	2145600	2145600	2145600	2145600	2145600	2145600	2145600	2145600
7.	Տոներային քարտրիջներ / Տոներ WC 5890/	30121460/3	348000	348000	348000	348000	348000	348000	348000	348000	348000
12.	Տոներային քարտրիջներ /Տոներ Xerox Versant 80 սև (K)/	30121460/35	703800	703800	703800	703800	703800	703800	703800	703800	703800
13.	Տոներային քարտրիջներ /Տոներ Xerox Versant 80 կապույտ (C)/	30121460/36	672000	672000	672000	672000	672000	672000	672000	672000	672000
14.	Տոներային քարտրիջներ /Տոներ Xerox Versant 80 կարմիր (M) /	30121460/37	672000	672000	672000	672000	672000	672000	672000	672000	672000
15.	Տոներային քարտրիջներ /Տոներ Xerox Versant 80 դեղին (Y) /	30121460/38	864000	864000	864000	864000	864000	864000	864000	864000	864000
16.	Տոներային քարտրիջներ /Տոներ քարթրիջ սև 26K Altalink C 8030/	30121460/39	228960	228960	228960	228960	228960	228960	228960	228960	228960
17.	Տոներային քարտրիջներ /Տոներ քարթրիջ կապույտ 15K Altalink C 8030 /	30121460/41	175200	175200	175200	175200	175200	175200	175200	175200	175200

18.	Տոներային քարտրիջներ /Տոներ քարթրիջ կարմիր 15K Altalink C 8030 /	30121460/42	175200	175200	175200	175200	175200	175200	175200	175200		175200
26.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/WC 5890 վառարանի հանգույց/	30121450/4	690000	690000	690000	690000	690000	690000	690000	690000		690000
27.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/WC 5890 թմբուկի հանգույց /	30121450/5	672000	672000	672000	672000	672000	672000	672000	672000		672000
28.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/Թմբուկ - քարթրիջ սև (DC 252)/	30121450/6	681000	681000	681000	681000	681000	681000	681000	681000		681000
29.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/Թմբուկ - քարթրիջ գունավոր (DC 252)/	30121450/7	796800	796800	796800	796800	796800	796800	796800	796800		796800
30.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/DC 252 մեքենայի դեվելոպերի հանգույց/	30121450/8	226080	226080	226080	226080	226080	226080	226080	226080		226080
31.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/DC 252 մեքենայի քաշող գլանակներ/	30121450/9	132000	132000	132000	132000	132000	132000	132000	132000		132000
32.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/Ֆոտո թմբուկ 125K Altalink C 8030 /	30121450/10	225000	225000	225000	225000	225000	225000	225000	225000		225000
33.	Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ/Թմբուկ Drum module Xerox Versant 80/	30121450/11	525600	525600	525600	525600	525600	525600	525600	525600		525600
43.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ/Մարզան/	42991160/3	46800	46800	46800	46800	46800	46800	46800	46800		46800
46.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ / Դանակ IPFAL 6550-95 EP թուղթ կտրող մեքենայի համար /	42991160/5	612000	612000	612000	612000	612000	612000	612000	612000		612000
53.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ / DC 252 մեքենայի պահեստամաս IBT BELT KIT /	42991160/12	86400	86400	86400	86400	86400	86400	86400	86400		86400
54.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ / DC 252 մեքենայի պահեստամաս IBT CLEANER /	42991160/13	110400	110400	110400	110400	110400	110400	110400	110400		110400

55.	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ / DC 252 մեքենայի պահեստամաս IST BTR ROLL /	42991160/14	110400	110400	110400	110400	110400	110400	110400	110400	110400
56.	Գրասենյակային և բիզնես մեքենաներ / Պատճենահան մեքենա /	30121210/1	3564000	3564000	3564000	3564000	3564000	3564000	3564000	3564000	3564000
58.	Գրասենյակային և բիզնես մեքենաներ /Թուղթ ոչնչացնող սարք	30121210/3	7056000	7056000	7056000	7056000	7056000	7056000	7056000	7056000	7056000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ԱՏԱ գլխավոր քարտուղարություն

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ
տնօրեն

Ի. Անդրեասյան

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-8/4-4 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

	Մատակարարված ապրանքների							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-8/4-4 պայմանագրի

ԱԿՏ N __
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն